ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վրաստան (ք. Թբիլիսի) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

Գեորգի Ավետիսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Վրաստան (քաղաք Թբիլիսի), 2019 թվականի նոյեմբերի 28-30-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը.**

Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի նախաձեռնությամբ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներին առնչվող հարցերի քննարկում: Վրաստանի տարածքի բուսասանիտարական իրավիճակի քննարկում, առկա ռիսկերի վերհանում, մասնավորապես բույսերի կարանտին վնասատու համարվող մարմարյա մլուկի՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներթափանցումը կանխելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացում և փորձի փոխանակում:

6. **Քննարկված թեմաները.**

Քննարկվել են Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանամերձ գոտիներում կենդանիների կատաղության դեմ պատվաստումների (ներքին եղանակով) պլանավորման, ծրագրի ֆինանսավորման և իրականացման, Հայաստանի Հանրապետություն եկող անասնաբուժական ենթահսկման բեռներն ուղեկցող սերտիֆիկատների էլեկտրոնային տարբերակով եղանակի անցման, և էլեկտրոնային տպված տարբերակով բեռների փոխադրման, գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ օգտագործվող պատվաստանյութերի օգտագործման վերաբերյալ հարցերը, այդ թվում անասնաբուժության ոլորտի՝ անասնահամաճարակային իրավիճակը պարբերաբար քննարկելու, կենդանիների հիվանդությունների դեպքում արագ արձագանքման, կենդանիների հիվանդությունների դեմ օգտագործվող պատվաստանյութերի և դրանց օգտագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի անասնաբուժության ոլորտի լիազոր մարմինների անասնաբույժ մասնագետների միասնական աշխատանքային խումբ ձևավորելու վերաբերյալ հարցերը: Քննարկվել են նաև Վրաստանի տարածքի բուսասանիտարական իրավիճակը, մասնավորապես մարմարյա մլուկի Հայաստանի Հանրապետության տարածք ներթափանցումը կանխելու համար

անհրաժեշտ գործողությունները: Կենդանիների ամառային արոտավայրերի ճանապարհներին կենսանվտանգության կետերի կառուցման հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպման ընթացքում ներկայացվել են Վրաստանի անասնահամաճարակային իրավիճակը և հակաանասնահամաճարակային միջոցառումների, կատաղության վերաբերյալ ամփոփ տվյալների վերաբերյալ ներկայացումներ: Վրաստանի սննդամթերքի ազգային գործակալության համապատասխան պաշտոնյաները հանդես են եկել զեկուցումներով և ներկայացրել Վրաստանի տարածքում առկա կարանտին վնասակար օրգանիզմների տարածվածությունը, այդ թվում՝ մարմարյա մլուկի տարածման արեալները, կենսաէկոլոգիական առանձնահատկությունները, վնասակարությունը, ինչպես նաև դրա դեմ պայքարի արդյունավետ միջոցառումները, այդ թվում՝ նախազգուշական:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել երկու երկրների համապատասխան պետական մարմինների միջև փոխգործակցությունը, լինել մշտական կապի մեջ, Վրաստանի տարածքում մարմարյա մլուկի նոր օջախների հայտնաբերման դեպքում տեղեկացնել նաև հայկական կողմին: Վրացական կողմը պատրաստակամություն է հայտնել ուժեղացնել Վրաստանի տարածքից դեպի Հայաստանի Հանրապետության տարածք արտահանվող բուսական ծագման մթերքների բուսասանիտարական հսկողությունը, որպեսզի հնարավորինս նվազեցվի բեռների հետ վնասատուի ներթափանցման ռիսկը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև, որ Վրաստանի սննդամթերքի ազգային գործակալության կողմից կմշակվի Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանամերձ գոտիներում կենդանիների կատաղության դեմ պատվաստումների ծրագիրը և կներկայացվի հայկական կողմի կարծիքին, և որ միասնական աշխատանքային խումբ ձևավորելու նպատակով՝ երկու երկրները կներկայացնեն մասնակիցների թեկնածություններ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է Հայաստանի Հանրապետության տարածք մարմարյա մլուկի հնարավոր ներթափանցման դեպքում վրացական կողմից ստանալ վարակի տարածման կանխարգելման, լոկալիզացման և լիկվիդացման մեթոդական աջակցություն՝ ըստ վնասակար օրգանիզմի զարգացման ցիկլի և վնասվող մշակաբույսի, որն ընդունել է վրացական կողմը: Այն հնարավորություն կտա գյուղատնտեսական մշակաբույսերը զերծ պահել մարմարյա մլուկի վնասակար ազդեցությունից: Հայկական կողմից առաջարկվել է նաև կազմել Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանամերձ գոտիներում կենդանիների կատաղության դեմ պատվաստումների իրականացման ծրագրի վերաբերյալ հուշագիր, որը կմշակվի լիազոր մարմինների իրավաբանների կողմից, որից հետո երկկողմ կստորագրվի:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

03 նոյեմբեր, 2019թ.